



ՄԻԶԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԲՐՅՈՒՏԵԼՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԵԵԿ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՉԱԽՄԲԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

2004 թվականի ապրիլի 28-ից մայիսի 2-ը Բրյուտելում քիչ հետո գրնվող Վավին քաղաքում կայացավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի և հասարակություն»¹ Նորընդիր հանձնախմբի առաջին զիշավոր հանդիպումը: Հանդիպմանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպես «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամ, մասնակցում էր Հովհակիմ արքուա Մատուցանը:

Հանձնախմբի նոր կազմն ընդուրվել էր 2003 թվականի դեկտեմբերի 13-18-ը Ժնևում կայացած ԵԵԿ 12-րդ Գլխավոր Ասամբլեայում ընդրված Կենքրունական Կոմիտեի առաջին հանդիպման ընթացքում: Աշխարհանքային խմբերի համար առաջարկվել էին թեկնածուներ անդամ Եկեղեցիների և կազմակերպությունների կողմից, որոնք հասպարզվեցին Վավելուով կայացած հանդիպմանը:

Նորընդիր հանձնախմբի առաջին ժողովին մասնակցում էին Հանձնախմբի 24 անդամները, դիմորդները Եկեղեցիների Եվրոպայի Ազգային Խորհրդից և այլ Եկումնների կազմակերպություններից: Ներկա էին նաև ԵԵԿ նախագահության անդամներ, որով ժողովականների թիվը հասնում էր 50-ի՝ Եվրոպայի 22 երկրներից:

Չորսօրյա բավականին լորջ հագեցված ծրագրով կիսվերի ընթացքում ժողովականները ընդրեցին հանձնախմբի արենադպրություններ, գործադիր կոմիտեի անդամներ և հասպարզեցին աշխարհանքային խմբերի համար առաջարկված թեկնածությունները և անդրադան 2004 -2009 թթ. աշխարհանքային ծրագրին:

Նախապես կազմված ծրագրի քննությունից և խմբագրումից հետո ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամները հասպարզեցին, որ առաջիկա քարիներին հանձնախումբն իր գործունեությունն իրականացնելու և հնվեյալ ոլորդներում.

Եվրոպայի ինքնեզրացում,

Եվրոպայի հերք զորակացվող աշխարհում,

¹ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը հիմնվել է ԵԵԿ և Եվրոպայի Եկումնների հանձնախմբի կողմից ասպարագանական և լքիկական գլուխականությունից ուստի հասարակության և Եկեղեցու առջև ծառացած խնդիրները՝ ուշադրություն սևնուրով համանվուական հարցնելու: Հանձնախումբը լավագներ ունի ԵԵԿ անդամ Եկեղեցիների հասպարհական կյանքին առեվլող կարծիքներն ու մտահոգությունները բարձրացնելու մի շարք բաղադրական կազմակերպություններուն: Այն իր գործունեությունը ծավալում է ընդրված հանձնախմբի և աշխարհանքային խմբերի միջոցով:

Հասկաբուն զարգացում,
Շրջակա միջավայրին առնվող խնդիրներ,
Սոցիալական խնդիրներ,
Տնտեսական զարգացումներ և փոխադարձ պարփակորություններ,
Գյուղագնդեսական և գյուղական կյանք,
Մարդու իրավունքներ և խոճի ազատություն,
Էրենիկ գիրություններ և տեխնիկա, Բիոթիկա և բիոլոգիա, Բիոլոգիա,
Եվրոպական օրենսդրություն,
Խաղաղություն, անվտանգություն և հաշվեցում,
Սեռային հավասարություն,
Կրթություն,
Միջկրթնական երկխոսություն:

Վերոնշյալ հարցերով գրադվելու համար կազմվել են համապատասխան աշխարհանքային խմբեր: Քանի որ հանձնախմբի աշխարհանքներին նայ Եկեղեցու մասնակցությունը դակավիլին նոր է, վերոնշյալ հարցերով գրադվով աշխարհանքային խմբերում է շարք չեն նայ Եկեղեցու ներկայացուցիչների մասնակցությունը: Օրակարգային հարցերից զարդ ժողովականներն այցելեցին Բյուսելում գրնորդ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի գրասենյակ, ծանրթացան ԵԵԿ գրքունենությանը, ապա ապրիլի 29-ի երեկոյան մասնակցեցին Բյուսելի Դոմինիկյան Եկեղեցու կայացած Եկումենիկ աղոթքին՝ Ավիրված Եվրոպայի գրասը նոր անդամներով ընդլայնմանը:

Եկումենիկ աղոթքի ընթացքում հանդիսավոր քարոզ խոսեց Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վերապատվելի Ժան Առնոլի դե Կլերմոնը, որն իր խոսքի համար ընարան էր ընդունել Սիրիայի մարզաբնության «Պարմենցան քեզ, ով մարդ, զինչ է բարի, կամ զինչ խնդրէ ի քեն Տէր, բայց առնել զիրատուս, և սիրել զողորմութիւն, և պարբռասի լինել երթալոյ զկի Տեառն Ասպծո քո» (Ձ 8) տողերը: Եկումենիկ աղոթքին, բացի ժողովականներից, մասնակցում էին Կաթոլիկ, Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Հավարկ հանդիպմանը, մայիսի 1-ին, Եվրոպայի գրասը նոր երկրներով ընդլայնվելու առիթով ընդունվեց հոչակագիր, ուր նշվում է.

«Ողջ Եվրոպայի գարբեր Եկեղեցիներից ներկայացուցիչները, ովքեր հավաքվել են Վավելեամ (Բյուսել) Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի հանդիպմանը մայիսի 1-ին, արդարադարձ են իրենց ուրախությունն ու զոհունակությունը Ասպծոն՝ Եվրոպայի գրասը նոր երկրներով ընդլայնվելու ձևորքերման համար:

Երկար գարիներ Եվրոպայի ինսիգնացման հարցը երկրամասի Եկեղեցիների համար օրակարգային է եղել: Քանի որ հաշվության գաղափարն Աստվածաշնչից է բխում, աշխարհագրական և քաղաքական սահմանների հայրահարումը մարդկանց և ազգերի միջև կենդրունական գեղ է գրավում քրիստոնյայի պարփականություններում: Քրիստոնեության պարմությունն ու զարգացումները Եվրոպայում խորապես փոխադրկապված են, և քրիստոնեությունը մեծապես նպաստել է ժամանակակից Եվրոպայի ծևավորմանը:

Եվրոպիստյունը սկսվեց մի Եվրոպայում, որն ավերվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից: Այն հասրապվեց և զարգացավ հիմնված հարուկ արժեքների վրա, որոն-

ցից կարտորները ծննդին խաղաղաբարության, միջոցները կիսելու, համերաշխության և ազագործության պարփակորությունները: Տնտեսական համագործակցությունը ըսորոշվում է որպես այս պարփակորություններն իրականացնելու կարևոր միջոցներից մեկը:

Սա այս համադրույթն է, որ պեսքը է տիսնել ներկա Եվրոպայի ընդլայնումը: Որոշ նոր անդամ երկրների համար սա խորհրդանշական պահ է, որը նշանարում է Եվրոպայում պարփակության բաղադրական բաժանումների ավարտը: Նոր իրավիճակը նույնագեն սրբեղություն է մի նոր ընկերակցություն, որ անդամ երկրներու ու նրանց ժողովուրդները կարող են միմյանց ավելի հարստացնելու ու միմյանցից օգրվել:

Վյայիսով, Միության ընդլայնումը ուղեկցվում է ուրախությամբ և հույսով մի շարք երկրներում: Վյետամնեայնիվ, այն նույնպես ուղեկցվում է մրածումներով՝ պայմանավորված այս գործընթացից սոցիալական հեգունեաներով: Մրցակցային շուկան և սոցիալական արդարության համարեղման մարդարավերը բակավին մեր առջև է: Այս համակշռման (բալանսի) ձեռքբերման փնտրությունը ԵԵԽ-ն իր «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի միջոցով կոչ է անում գորացնելու պարփակորություններն այն արժեքների հանդեպ, որոնց վրա Միությունը կառուցված է, ինչպիսիք են մարդու արժանապատվությունը, արդարությունը, համերաշխությունը, հավասարությունը և մարդու իրավունքների հարգումը: Խնկապես, 2003 թվականի դեկտեմբերին իր անդամ Եկեղեցիներին մի բաց նամակում ԵԵԽ Կենտրոնական Կոմիտեն հույս է հայտնում, որ Եվրոպայի ինքներգացումը պեսքը է լինի գործընթաց՝ նպաստակադրված բարեկավելու անհապների և համայնքների կյանքը:

Վյելի ընդարձակ Եվրոպայի սրբեղությունը, չնայած արդի նրա պարմության կարևոր պահին, պեսքը է դիտվի որպես շարունակվող գործընթաց: Եվրոպիությունը պեսքը է կառուցի լավ հարաբերություններ այն երկրների հետ, որոնք իր սահմաններից դուրս են գտնվում: Ամբողջական նպատակը պեսքը է լինի այս դարաձրում և իր սահմաններից դուրս գտնվող մարդկանց կյանքի բարեկավումը:

Այս ուրախ առիթով Եվրոպայի Եկեղեցիները վերահսկագրություն են իրենց պարբռաւակամությունը՝ իրենց ամբողջական մասնակցությունը բերելու Եվրոպայի ապագա զարգացման գործինքներուն:

Զանի որ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախությունը գերազանցապես գրադաւում է քաղաքական-հասարակական հարցերով, և մասնանակի կարևորագոյն հարցերից մենքը Եվրոպիության ընդլայնումն է, այս առիթով բավականին լուրջ ըննարկումներ եղան ինեւ ժողովի ընթացքում: Նորագործող համադրություն ներկաները հարկավեն իրենց անհանգույթունը հայդենեցին Եվրոպիության Սահմանադրության 50-րդ հոդվածի առիթով, որում չի նշվում, որ Եվրոպան իհմնված է քիչսպոնեական արժեքների վրա, և թուրքիայի Եվրոպիությանն անդամակցելու հարցին, որը պեսքը է ավելի հանգամանայից քննարկման արժանանա սույն թվականի սեպտեմբեռյան հանդիպման ընթացքում:

ՇՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Միջնկեղեցական հարաբերությունների բաժին